

Թիւ 319  
Մայիս 26, 1959

Արժանաշնորհ  
Տ. Արթանէս Աւագ Բհնյ. Փափազեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Լուս. Եկեղեցւոյ  
Շիրակո.

Սիրելի Տէր Հայր.

Առաջնորդ Սրբազան Հօր հրահանգով այսու ձեզի կը յիշեցնենք,  
թէ տակաւին Առաջնորդարան չէ դրկուած Ուեսդ ֆուլմընի ծուխին տարեկան  
տեղեկագիրը:

Այս պակասը լրացնելու համար ներքակ դարձեալ ձեզի կը դրկենք  
տեղեկագրի հարցարանին օրինակը, խնդրելով որ բարեհաճիք առաջին պատե-  
հութեամբ զայն լեցնելով վերադարձնել Առաջնորդարան:

Ինչպէս գիտէք, յառաջիկայ Թեմական Պատգամաւորական ժողովին  
ներկայացնելիք Թեմական Խորհուրդի տեղեկագիրը ամբողջացնելու համար  
անհրաժեշտ է մեր տրամադրութեան տակ ունենալ Թեմի քուր յեկեղեցիներուն  
տարեկան տեղեկագրերը Յունիս տասէն առաջ:

Ապաւինելով Ձեր գործակցութեան.

Մնամ խորին յարգանքք

Սուրէն Մանուէլեան  
Դիւանապետ